# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
# ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am


# ՈՐՈՇՈՒՄ

## 27 ԱՊՐԻԼԻ 2022 ԹՎԱԿԱՆ N 48-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-Ի ՅՈԹԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածներով և հաշվի առնելով Ապարան համայնքի ղեկավարի առաջարկությունը.

*Ապարան համայնքի ավագանին որոշում է.*

1.Հաստատել Ապարան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի 2022 թվականի ապրիլի 27-ի յոթերորդ նիստի օրակարգը՝

(զեկուցող՝ Կ.Եղիազարյան)

2. Ապարանի համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համայնքի 2022թ. բյուջեի 1-ին եռամսյակի կատարման մասին:

(զեկուցող՝ Կ.Եղիազարյան)

3.Ապարան համայնքի 2022-2026թթ. հնգամյա զարգացման ծրագիր հաստատելու մասին

(զեկուցող՝ Հ.Մկրտչյան)

4.Ապարան համայնքի Ապարան քաղաքի մ.բաղրամյան փողոցի թիվ 10,14,17,19, 25 բնակելի շենքերի ճակատների և Մ.Բաղրամյան 25 շենքի մուտքերի վերանորոգում իրականացնելու նպատակով 2022թ. տարեկան աշխատանքային պլանում /ՏԱՊ/ լրացում և փոփոխություն կատարելու մասին

(զեկուցող՝ Հ.Մկրտչյան)

5. Ապարան համայնքի կարիքների համար 2022թ. ընթացքում ձեռք բերված գույքերը համայնքային սեփականության ցանկում ընդգրկելու և համայնքի ավագանու՝ 28.07.2020թ. N61-Ա որոշման թիվ 1 հավելվածում լրացումներ կատարելու մասին

(զեկուցող՝ Ի.Թադևոսյան)

6. Ապարան համայնքի մի խումբ բնակիչների հարկային արտոնություններ տրամադրելու մասին

(զեկուցող՝ Ն.Սիրեկանյան)

7. Ապարան համայնքի ավագանու 25. 03.2022 թ N 34-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

(զեկուցող՝ Ի.Թադևոսյան)

8.Ապարան համայնքի <<Վարդանանց ասպետների անվան մանկապարտեզ>> և Ապարան համայնքի <<Հարթավան գյուղի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ների շենքերը անհատույց օգտագործման տրամադրելու մասին

(զեկուցող՝ Գ.Խաչատրյան)

9.Ապարան համայնքի սեփականություն հանդիսացող Արագած գյուղի մշակույթի տան շենքից 14,87քմ մակերեսով տարածք վարձակալության տրամադրելու մասին:

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

10. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Վարդենիս գյուղի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականությունը հանդիսացող 0,043 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

11.ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Ապարան քաղաքի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականությունը հանդիսացող 0,12 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

12. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Ծաղկաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 5,0 հա հողատարածքի նպատակային նշանակությունը փոխելուն համաձայնություն տալու մասին

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

13. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող 0,435 հա հողատարածքի նպատակային նշանակությունը փոխելուն համաձայնություն տալու մասին:

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

14.Պետական և համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը մրցույթային կարգով վաձակալության տրամադրելու թույլտվություն տալու մասին:

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

15. Ապարան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին:

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

16. Ապարանի համայնքի վարչական տարածքում գտնվող Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող ջրային նշանակության հողակտորը ձկնաբուծության նպատակով կառուցապատման իրավունքով վաձակալության տրամադրելու թույլտվություն տալու մասին

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

17.ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Կայք գյուղի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականությունը հանդիսացող 0,0265 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

18. Ապարան համայնքի ավագանու 20.11.2017թ թիվ 02-Ն որոշմամբ ստեղծված <<Ապարանի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի գործունեությունը դադարեցնելու մասին

(զեկուցող՝ Ի.Թադևոսյան)

19.Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ապարան համայնքի կազմում ընդգրկված <<ՀՀ Արագածոտնի մարզի Մելիքգյուղի համայնքապետարանի աշխատակազմ>> հիմնարկի գործունեությունը դադարեցնելու մասին

(զեկուցող՝ Ի.Թադևոսյան)

20.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական գումարման օրը սահմանելու մասին

(զեկուցող՝ Ի.Թադևոսյան)

Ավագանի՝ (կողմ-19) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Եղիազարյան Կարեն
Կարապետյան Արկադի
Պետրոսյան Գոռ
Մակարյան Վահան
Ավդալյան Արարատ
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Գեղամյան Խաչիկ
Մանուկյան Աղաբեկ
Մխիթարյան Վարդան
Երեմյան Աղվան
Սահակյան Հովհաննես
Փարվանյան Արթուր
Ասատրյան Արամ
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Սուրեն
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ
Դավթյան Արտյոմ

Համայնքի ղեկավար՝ Կ.Մ.Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

Ա Պ Ա Ր Ա Ն  Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի  Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93

էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2022 ԹՎԱԿԱՆ N 49-Ա

## ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 Թ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի, ,,Բյուջետային համակարգի մասին,, ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի պահանջներին համապատասխան.

Ապարանի համայնքի ավագանին որոշում է՝

1.Ի գիտություն ընդունել Ապարան համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համայնքի 2022թ. բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին՝ համաձայն N 1 հավելվածի:

Ավագանի՝ (կողմ-19) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Եղիազարյան Կարեն
Կարապետյան Արկադի
Պետրոսյան Գոռ
Մակարյան Վահան
Ավդալյան Արարատ
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Գեղամյան Խաչիկ
Մանուկյան Աղաբեկ
Մխիթարյան Վարդան
Երեմյան Աղվան
Սահակյան Հովհաննես
Փարվանյան Արթուր
Ասատրյան Արամ
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Սուրեն
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ
Դավթյան Արտյոմ

Համայնքի ղեկավար՝ Կ.Մ.Եղիազարյան

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
Ապարան համայնքի ավագանու
27.04.2022թ. թիվ 49-Ա որոշմամբ

# ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 Թ ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ապարան համայնքի 2022 թ գործունեությունը նպատակաուղղված է եղել համայնքի 2022թ բյուջեի կատարումն ապահովելու և դրա շնորհիվ համայնքի կենսագործունեության բոլոր ուղղությունների բնականոն գործունեությունն ու բնակավայրերում առկա առաջնային խնդիրների լուծմանը: Ապահովվել է կատարված աշխատանքների թափանցիկությունն ու հրապարակայնությունը՝ համայնքային կայքի, սոց. ցանցերի և բնակչության հետ հանդիպումների միջոցով:
2022 թ 1-ին եռամսյակում համայնքի վարչական բյուջեն կատարվել է 23,4 %-ով, ֆոնդային բյուջեն՝ 0,03 %-ով, սեփական եկամուտների հավաքագրումը՝ 19,25 %-ով:

2022 թ համայնքի վարչական բյուջեի կատարման ցուցանիշները՝

| Եկամտատեսակներ | Պլան /ՀՀ դրամ | Կատարված /ՀՀ դրամ | Կատարման % |
|---|---|---|---|
| ՀՀ կառավարության կողմից տրվող դոտացիա | 737.704.500 | 184.426.100 | 25,0 |
| Արվեստի դպրոցներին տրվող սուբվենցիա | 1.961.000 | 445.440 | 20,5 |
| ՔԿԱԳ բաժնին տրվող սուբվենցիա | 2.227.200 | 403.900 | 20,0 |
| Համայնքի սեփական եկամուտներ | 280.000.000 | 53.897.682 | 19,25 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ՝ | 1.021.892.700 | 239.183.122 | 23,4 |
| ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ՝ | 362.000.000 | 94.917 | 0,03 |

2022 թ բյուջեի 1-ին եռամսյակի սեփական եկամուտների կատարման ցուցանիշները՝

| N | ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐ | Պլան /հազ.դրամ/ | Կատարված /հազ.դրամ/ | Կատարման % |
|---|---|---|---|---|
| 1 | Հողի հարկ | 13,000,000.00 | 1,956,858.00 | 15.05% |
| 2 | Գույքահարկ /փոխադրամիջոցի/ | 108,320,000.00 | 29,857,940.00 | 27.56% |
| 3 | Անշարժ գույքի հարկ | 53,400,000.00 | 5,239,505.00 | 9.81% |
| 4 | Հողի և գույքի վարձավճար | 24,540,000.00 | 1,556,008.00 | 6.34% |
| 5 | Գույքահարկ | 2,000,000.00 | 452,632.00 | 22.63% |
| 6 | Տուրքեր և վճարներ | 40,540,000.00 | 10,775,941.00 | 26.58% |
| 5 | Վարձավճարներ /աղբահանության և խմելու ջրի/ | 38,200,000.00 | 4,058,798.00 | 10.63% |
| Ընդամենը վարչական բյուջե՝ | | 280,000,000.00 | 53,897,682.00 | 19.25% |
| | Հողի և գույքի օտարումից մուտքեր՝ | 362,000,000.00 | 94,917.00 | 0.03% |

2022 Թ ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ՝

| N | Հոդվածի անվանումը | ՊԼԱՆ Հազ.դրամ | ԿԱՏԱՐՎԱԾ Հազ.դրամ | ԿԱՏԱՐՄԱՆ % |
|---|---|---|---|---|
| | ԸՆԴՀԱՄԵՆ ԾԱԽՍԵՐ՝ | 1,325,881.70 | 321,263 | 24.23% |
| 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների մասով՝ | 473,406.00 | 93,444 | 19.74% |
| | Որից՝ | | | |
| - | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարու | 238,904.40 | 78484.6 | 32.85% |
| - | Հիմնական խմբին չդասվող պարտքային պարտավորություն | 22174.4 | 9506.5 | 42.87% |
| - | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 210100 | 5009.1 | 2.38% |
| - | ՔԿԱԳ բաժնի պահպանում | 2227.2 | 444 | 19.94% |
| 2 | Պաշտպանություն | 1000 | 0 | 0.00% |
| | Որից՝ | | | |
| | Պաշտպանություն (այլ դասին չպատկանող) | 1000 | | 0.00% |
| 3 | Տնտեսական հարաբերություններ | 46572.7 | 89837.9 | 192.90% |
| | Որից՝ | | | |
| | ճանապարհային տրանսպորտ | 46572.7 | 89837.9 | 192.90% |
| 4 | Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն | 480553 | 79261 | 16.49% |
| | Որից՝ | | | |
| - | Բնակարանային շինարարություն | 111917 | | 0.00% |
| - | Ջրամատակարարում և կոյուղի | 48903.6 | | 0.00% |
| - | Բնակ.շինարարություն և կոմունալ ծառայություն | 280732.4 | 67346 | 23.99% |
| - | Արտաքին լուսավորություն | 39000 | 11915 | 30.55% |
| 5 | Հանգիստ, մշակույթ և կրոն բնագավառի մասով | 51655 | 8655 | 16.76% |
| | Որից՝ | | | |
| - | Սպորտային ծրագրեր | 2600 | 0 | 0.00% |
| - | Գրադարանի մասով | 10550 | 2555 | 24.22% |
| - | Մշակույթի մասով | 38505 | 6100 | 15.84% |
| 6 | Կրթության բնագավառի մասով՝ | 229695 | 48295 | 21.03% |
| | Որից՝ | | | |
| - | Նախադպրոցական կրթության բնագավառի մասով՝ | 132943 | 24200 | 18.2% |
| - | Արտադպրոցական դաստիարակության բնագավառի մասով | 96752 | 24095 | 24.90% |
| 7 | Սոցիալական Պաշտպանություն | 13000 | 1769.8 | 13.61% |
| | Որից | | | |
| - | Սոցիալական հատուկ արտոնություններ | 13000 | 1769.8 | 13.61% |
| 8 | Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդ | 30000 | | 0.00% |

Գնահատելով կատարված աշխատանքներն ու առաջիկա անելիքները, հաղթահարելով առկա պրոբլեմներն ու դժվարությունները, խնդիր է դրվում պահպանելու ձեռքբերումները և անելու հնարավոր առավելագույնը ապահովելու բոլոր բնակավայրերի բավարար կենսագործունեությունը, կայուն և հետևողական զարգացումը:

Համայնքապետարանի գործունեության ապահովման և արդյունավետության բարձրացման գործում արդյունավետ է եղել ավագանու գործնական և համերաշխ աշխատանքը, խնդրները համատեղ ուժերով հաղթահարելու հետևողականությունը, կամքն ու վճռականությունը:

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Ի.Թադևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
Ա Պ Ա Ր Ա Ն Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2022 ԹՎԱԿԱՆ N 50-Ա

## ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022-2026ԹԹ. ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերի պահանջներին համապատասխան.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել Ապարան համայնքի 2022-2026թթ. հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն N1 հավելվածի:

2.Սույն որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարի վրա:

Ավագանի՝ (կողմ-19) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Եղիազարյան Կարեն
Կարապետյան Արկադի
Պետրոսյան Գոռ
Մակարյան Վահան
Ավդալյան Արարատ
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Գեղամյան Խաչիկ
Մանուկյան Աղաբեկ
Մխիթարյան Վարդան
Երեմյան Աղվան
Սահակյան Հովհաննես
Փարվանյան Արթուր
Ասատրյան Արամ
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Սուրեն
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ
Դավթյան Արտյոմ

Համայնքի ղեկավար՝ Կ.Մ.Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

# ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

## ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2022-2026թթ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն
2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն
2.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակ
2.3.Համայնքում իրականացվող ծրագրերը
2.4. Պատվիրակված ծառայություններ
2.5. Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծություն և ֆինանսական կանխատեսումները
2.6.Զարգացման խոչնդոտներ և դժվարություններ
2.7.Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում
3.1 Համայնքի զարգացման տեսլական
3.2.Համայնքի զարգացման անմիջական նպատակներ
4. ՀՀԶԾ ֆինանսավորում
5. ՀՀԶԾ մոնիթորինգի անձնագիր

## 1.ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

2017 թվականի նոյեմբերի 5-ին, 21 տարվա ընդմիջումից հետո բոլոր ապարանցիները դարձյալ միավորվեցին մեկ համայնքի կազմում՝ դառնալով մեկ բռունցք, միասնական ու ժողովրդավար արժանապատիվ համայնք:

Տարեցները լավ են հիշում, որ նախկինում Ապարանի շրջանն ավելի բազմաբնակավայր է եղել : Ապարանի շրջանի կազմում է եղել նաև Մելիքգյուղը: Եվ 2021 թվականի դեկտեմբերի 5-ին, շուրջ 50 տարի անց, Մելիքգյուղը դարձյալ վերադարձավ ապարանյան իր արմատներին՝ ընդգրկվելով Ապարան համայնքի կազմում՝ միասին և համատեղ ուժերով հաղթահարելու առկա դժվարությունները, լուծելու շատ խնդիրներ:

Անցած 4 տարիների ընթացքում միասնական դարձած մեր համայնքում հաղթահարվել են բազմաթիվ դժվարություններ, լուծում ստացել տասնամյակներ շարունակ անհուսալի թվացող բազմաթիվ խնդիրներ: Ապարանը ներդրումների համար դարձել է բարենպաստ ու հուսալի համայնք: Համայնքապետարանի, գյուղերի վարչական ղեկավարների և բնակչության ակտիվ համագործակցության արդյունքում կենտրոնացվել է համայնքի ամբողջ ներուժը, կառուցվել ու շենացվել է մեր համայնքը՝ քաղաքն ու գյուղերը:

Սակայն, մենք դեռ հեռու ենք յուրաքանչյուր ապարանցու, նրա ընտանիքի համար առավել բարեկեցիկ պայմաններով քաղաք ու գյուղ ունենալուց, ինչը մեր գերագույն նպատակն է: Առաջիկա հինգ տարիների ընթացքում նախատեսվում է համայնքը դարձնել էլ ավելի

- բարեկարգ
- ներդրումների համար բարենպաստ
- բնակության համար ցանկալի ու հարմարավետ
- զբոսաշրջության համար գրավիչ:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը կազմվել է բազմաթիվ հանդիպում-քննարկումների, հանրային լսումների և նախորդ տարիներում կատարված աշխատանքների և եկամուտների վերլուծության հիման վրա: ՀԶՀԾ-ն մշակելիս ուսումնասիրվել է նաև 22 համայնքների նախորդ հնգամյա ժամանակաշրջանի զարգացման ծրագիրը, միտումները և դրա շարունակականության հնարավորությունները:

Հնգամյա ծրագրում մատնանշված ներդրումները կզարգացնեն և կընդլայնեն համայնքային ենթակառուցվածքը գործող հիմնարկների հնարավորություններն ու գործունեության առավել հարմարավետ պայմաններ կստեղծեն, կունենանք նոր մանկապարտեզներ, առավել կատարելագործված աղբահանության համակարգ:

Ուշադրության կենտրոնում կլինի նաև համայնքի մշակութային, մարզական կյանքը, որը բարոյապես և ֆիզիկապես առողջ հասարակություն ունենալու գրավականն է:

Կշարունակվի հստակ երիտասարդական քաղաքականությունը՝ նրանց ակտիվորեն ներգրավելով ՏԻՄ գործունեության և քաղաքային կյանքի տարբեր ձեռնարկներում:

Համայնքապետարանը նաև կօգտագործի ամեն միջոց և հնարավորություն՝ դրսում Ապարանի համար ներկայանալի և գրավիչ իմիջ ստեղծելու համար, որը դեպի Ապարան կբերի հնարավոր ներդրողներին:

Եվ ի վերջո, ծրագրում ենք առավել լայն կիրառություն ապահովել էներգախնայող միջոցների համար, այլընտրանքային էներգետիկայի կիրառմամբ քաղաքում լուսավորության ավելացման, հիմնարկների ջեռուցման ապահովման համար և արևային ֆոտովոլտային կայանների տեղադրմանը բնակչության շրջանում խթանելու համար:

Իհարկե, այս ամենն իրականացնելու ճանապարհին կան խոչընդոտներ՝ համայնքային բյուջեի սուղ հնարավորություններ, վարչարարական երկար գործընթացներ, բնակիչների ցածր մասնակցայնություն համայնքի զարգացման գործին և այլն, սակայն հաշվի առնելով և օգտագործելով առավելությունները, Ապարանը առաջիկա հինգ տարիների ընթացքում կդառնա ներդրումների համար բարենպաստ, բնակության համար ցանկալի ու հարմարավետ, զբոսաշրջության համար գրավիչ համայնք:

Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ապարան խոշորացված համայնքի 2022-2026 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (ՀԶՀԾ) մշակվել է նաև հիմք ընդունելով ներկայումս գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ՏԻՄ-երի իրավասությունները, համայնքի ղեկավարի լիազորությունները նրա գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶՔԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ օրենքի 37-րդ, 38-րդ և 53-րդ հոդվածների դրույթները, ինչպես նաև ՀՖՄ ՀԿ փորձագետների կողմից մշակված և ՀՀ ՏԿԱԻՆ կողմից 2016 թվականին հավանության արժանացած «Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանությունը» (այսուհետ՝ Մեթոդաբանություն):

Սույն ՀԶՀԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլն) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և հանրային ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶՀԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել նաև համայնքում աղետի բազմաբնույթ վտանգները (ռիսկերը), որոնց կառավարման համար նախատեսվել են որոշ գործողություններ ու միջոցառումներ:

Համայնքի 2022-2026թթ. ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով համայնքի նորընտիր ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները՝ բարեփոխումներ իրականացնելու, աստիճանաբար լուծելու համայնքում առկա խնդիրները, բարելավելու համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները: ՀԶՀԾ-ն դիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց՝ համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմինը փաստաթուղթը մշակելիս հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին:

**Սիրելի հայրենակիցներ, յուրաքանչյուրիս պարտքն է հիշել մեր պապերի սխրանքները, գնահատել և պահպանել նրանց ստեղծածը, արյան գնով ձեռք բերված և մեծ դժվարությամբ պահպանված մեր հայրենիքի այս փոքրիկ կտորը, որն այսօրվա մեր ջանքերով պիտի զարգացնենք և հզորացնենք հանուն մեր հայրենիքի և գալիք սերունդների:**

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### 2.1.Համայնքի ընդհանուր նկարագրություն

**Ապարան խոշորացված համայնքը** ձևավորվել է **2017 թվականի** Նոյեմբերի 5-ի՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքում: Խոշորացված համայնքը կազմվել է մեկ քաղաքային՝ Ապարան և 20 գյուղական՝ Արագած, Արայի, Ափնագյուղ, Եղիպատրուշ, Երնջատափ, Թթուջուր, Լուսագյուղ, Կայք, Հարթավան, Ձորագլուխ, Նիգավան, Շենավան, Շողակն, Չքնաղ, Ջրամբար, Սարալանջ, Վարդենիս, Վարդենուտ, Ծաղկաշեն, Քուչակ վարչական տարածքների միավորումից: 2021 թվականի դեկտեմբերի 5-ի արտահերթ ընտրությունների արդյունքում Ապարան համայնքը կրկին խոշորացվեց, 21 վարչական տարածքներին միացավ Մելիքգյուղ բնակավայրը: Համայնքի կենտրոնը Ապարանն է՝ Արագածոտնի մարզում մեծությամբ և նշանակությամբ երկրորդ համայնքը: Գտնվում է Քասախ գետի ավազանի վերին հատվածում, ՀՀ ամենաբարձր գագաթի՝ Արագած լեռան և Ծաղկունյաց լեռնաշղթայի միջև, ծովի մակերևույթից 1800մ-2200մ բարձրության վրա: Ապարան խոշորացված համայնքի ընդհանուր տարածքը կազմում է **57036,93 հա:**

Ապարան համայնքի վարչական տարածքով է անցնում միջպետական Մ-3 մայրուղին:

Ապարանն առաջին անգամ հիշատակում է Պտղեմեոսը (2-րդ դ.) Կասալա ձևով: Ապարան քաղաքի ներկա տարածքը կազմել է պատմական Նիգ գավառի արևմտյան հատվածը: Հստակ տեղեկությունը Նիգ գավառի մասին նշվել է Ապարանում գտնված հունարեն մի արձանագրության մեջ, որը վերաբերում է 308 թվականին: Այն վերծանել է հետազոտող-գիտնական Մ.Ի.Ռոստովցեր: Արձանագրությունը տեղեկացնում է հետևյալը. <<Մեծ Հայքի Տրդատ թագավորը նվիրում է Գնթունիներին Նիգ գավառը և նրա կենտրոնատեղի հանդիսացող Նիգ քաղաքը: Գնթունի իշխանական տոհմը Ապարանում կառուցել է Քասախի բազիլիկան 4-րդ դարում, այն հանդիսացել է արքունիքի աղոթատեղին>>: Ըստ Ն. Մառի՝ Քասախի եռանավ բազիլիկան համարվում է ամենահինը և կամարաձև կառուցման մշակույթը սկսվել է Ապարանում:

Հայտնի է, որ 10-12-րդ դարերում Նիգ գավառում իշխել են Պահլավունիները, իսկ 13-14-րդ դարերում Նիգ գավառի արևմտյան հատվածը՝ Ապարանի գավառով հանդերձ դառնում է Վաչուտյան իշխանների կալվածքը:

Ապարանը, որպես հնագույն բնակավայր աչքի է ընկնում պատմական և ճարտարապետական հուշարձանների առկայությամբ, բնական, բուժիչ աղբյուրներով, հանքային ջրերով և սառը կլիմայական պայմաններով: Հ. Աճառյանը տալով բառի բացատրություն գրում է <<Ապարան՝ մեծ տուն կամ պալատ. Իշխանական տուն, հին

պարսկերեն՝ դղյակ, պալատ, ապարանք բառն է, որը ժամանակի ընթացքում կորցրել է ք հոգնակիակերտ մասնիկը>>:

Խաչատուր Աբովյանը Վերք Հայաստանի վեպում Ապարանի մասին գրել է. <<...Ուր հայոց թագավորը, իշխանքը, ու պալազատքը՝ Ապարանի Բյուրատեսակ ծաղիկների հոտը, էն պատվական աղբյուրների համն առնելով, իրենց ամառվան օրերը հովացնում...>>:

Զաքարիա պատմիչը և Ղևոնդ Ալիշանը իրենց աշխատություններում Ապարանը ներկայացրել են որպես Երևանի սարդարների և հայ կաթողիկոսների համար ամառանոցային վայր:

Իրենց հնագույն պատմությամբ, մշակութային կոթող-հուշարձաններով, տեսարժան վայրերով հատկանշական են նաև Ապարան խոշորացված համայնքի վարչական տարածքները: Ապարան համայնքի Վարդենուտ և Շենավան գյուղերում գտնվել են պարթևական դրամներ, որոնք պահվում են Հայաստանի պետական թանգարանում: Այդ դրամների հայտնվելը Արագածի ստորոտին հաստատումն է այն բանի, որ հնագույն շրջանում ևս Նիգ-Ապարանով է անցել Արարատյան դաշտ - Հյուսիսային Հայաստան - Վրաստան առևտրատնտեսական ճանապարհը: Միաժամանակ այն ապացույցն է այս բնակավայրերի՝ դեռ մ.թ.ա. 1-ին դարում գոյություն ունենալու փաստի (Արտաշեսյան թագավորների օրոք):

Աղյուսակ 1.Ապարան խոշորացված համայնքի վարչական տարածքներն /հա/ ու ժողովրդագրական տվյալները

| | | Ապարան համայնքի բնակչությունն ըստ տարիքային խմբերի 2021թ. | | | | | | | | | | | | Փախստականների թիվ | Վարչական տարածք/հա/ | Ըստ պետռեգիստրի թվաքանակի | Աշխատունակ բնակչության թվաքանակը | Տնտեսությունների թվաքանակը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| N | Բնակավայրը | 0-4 | 5 | 6 | 7 | 8-14 | 15 | 0-15 | 16 | 17 | 18 | 16-62 | 63 և ավելի | | | | | |
| 1 | Արագած | 95 | 39 | 29 | 47 | 305 | 39 | 553 | 43 | 48 | 33 | 2578 | 694 | 4 | 5646,90 | 3562 | 3562 | 687 |
| 2 | Արայի | 11 | 7 | 7 | 5 | 38 | 6 | 74 | 4 | 1 | 3 | 318 | 118 | 3 | 3344,8 | 557 | 580 | 128 |
| 3 | Եղիպատրուշ | 31 | 9 | 7 | 4 | 51 | 14 | 116 | 9 | 7 | 7 | 371 | 70 | 3 | 3804,62 | 557 | 523 | 160 |
| 4 | Երնջատափ | 33 | 7 | 6 | 5 | 52 | 2 | 105 | 8 | 2 | 6 | 409 | 74 | 6 | 3122,3 | 588 | 583 | 120 |
| 5 | Ծաղկաշեն | 19 | 7 | 7 | 6 | 39 | 8 | 86 | 10 | 10 | 9 | 443 | 86 | 13 | 1834,11 | 645 | 404 | 110 |
| 6 | Շենավան | 87 | 36 | 32 | 24 | 179 | 27 | 385 | 26 | 17 | 18 | 1118 | 218 | 3 | 1890,53 | 1791 | 1791 | 350 |
| 7 | Հարթավան | 47 | 12 | 7 | 14 | 94 | 13 | 187 | 10 | 9 | 15 | 717 | 98 | 0 | 1417,55 | 1002 | 1002 | 201 |
| 8 | Վարդենուտ | 58 | 8 | 13 | 17 | 72 | 10 | 178 | 6 | 14 | 9 | 773 | 74 | 0 | 3821,62 | 1025 | 1003 | 173 |
| 9 | Վարդենիս | 49 | 14 | 10 | 12 | 91 | 9 | 185 | 8 | 4 | 7 | 474 | 67 | 0 | 2541,02 | 726 | 583 | 126 |
| 10 | Ջրամբար | 3 | 2 | 3 | 2 | 1 | 0 | 11 | 0 | 0 | 0 | 93 | 29 | 3 | 434,44 | 133 | 133 | 59 |
| 11 | Շողակն | 9 | 5 | 3 | 1 | 13 | 0 | 31 | 3 | 2 | 1 | 114 | 10 | 0 | 2189,66 | 155 | 150 | 27 |
| 12 | Կայք | 19 | 7 | 12 | 6 | 48 | 10 | 102 | 5 | 7 | 6 | 396 | 98 | 5 | 809,2 | 596 | 596 | 127 |
| 13 | Չքնաղ | 7 | 4 | 2 | 3 | 24 | 5 | 45 | 6 | 4 | 5 | 183 | 32 | 0 | 1305,46 | 260 | 260 | 46 |
| 14 | Թթուջուր | 25 | 4 | 6 | 3 | 27 | 3 | 68 | 1 | 2 | 3 | 158 | 28 | 0 | 2018,86 | 294 | 270 | 49 |
| 15 | Ձորագլուխ | 14 | 5 | 7 | 5 | 23 | 5 | 59 | 1 | 2 | 2 | 156 | 34 | 6 | 2776,88 | 249 | 242 | 82 |
| 16 | Նիգավան | 33 | 6 | 8 | 10 | 51 | 5 | 113 | 5 | 3 | 4 | 440 | 46 | 7 | 4558,68 | 599 | 548 | 156 |
| 17 | Լուսագյուղ | 41 | 5 | 17 | 10 | 55 | 10 | 138 | 9 | 11 | 8 | 605 | 96 | 0 | 1740,24 | 839 | 831 | 128 |
| 18 | Սարալանջ | 6 | 3 | 2 | 6 | 9 | 1 | 27 | 1 | 2 | 0 | 100 | 21 | 0 | 1248,25 | 148 | 148 | 37 |
| 19 | Մելիքգյուղ | 46 | 15 | 13 | 14 | 123 | 17 | 228 | 14 | 12 | 19 | 859 | 185 | 0 | 2965 | 1270 | 1270 | 320 |
| 20 | Ափնա | 25 | 7 | 5 | 10 | 54 | 9 | 110 | 9 | 5 | 4 | 519 | 68 | 0 | 1705,92 | 697 | 621 | 148 |
| 21 | Քուչակ | 94 | 25 | 27 | 29 | 170 | 20 | 365 | 25 | 23 | 22 | 1412 | 230 | 0 | 4087,24 | 2007 | 2007 | 461 |
| | | 0-5 | | 6-9 | | 8-14 | | 15-17 | | 18-62 | | 63 և ավելի | | | | | | |
| 22 | Ապարան | 179 | | 140 | | 389 | | 290 | | 5010 | | 930 | | | 3772,8 | 7801 | 7801 | 2004 |

# 2.2.ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ

| Համայնքի տարեկան բյուջե | ՀՀ դրամ /հազար/ | % |
|---|---|---|
| Համայնքի 2022թ. տարեկան բյուջեն եկամուտների մասով | 1386133,1 | |
| Բյուջեում սեփական եկամուտները | 280000,0 | 20,2% |

2022Թ. ԲՅՈՒՋԵԻ ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ՝

| Եկամտատեսակներ | 2022թ. ՀՀ դրամ /հազար/ |
|---|---|
| ՀՀ կառավարության կողմից տրվող դոտացիա | 737704,5 |
| Համայնքի վարչական մասով սեփական եկամուտներ | 1024132,4 |
| Պատվիրակված լիազորությունների մասով հատկացվելիք վճար | 2227,2 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ | 1386133,1 |

[illegible] տեսակարար կշիռն [illegible]

*2018 թվական*



*2019 թվական*



***2020 թվական***



***2021 թվական***



*Ապարան համայնքի բյուջեի հարկային, եկամուտների համամասնությունը:*

***2018 թվական***



***2019 թվական***



*2020 թվական*



*2021 թվական*



*Տեղական ինքնակառավարումը համայնքում*

Համայնքի ամբողջ տարածքում բնակչության հետ տարվող աշխատանքները համակարգում, համայնքի ղեկավարի ընդունած որոշումների ու կարգադրությունների վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը հանրությանը հասանելի են դարձնում վարչական ղեկավարները: 2021թ-ի դեկտեմբերի 5-ին կայացած ՏԻՄ ընտրությունների արդյունքում ընտրվել են համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին՝ բաղկացած 21 անդամից: Համայնքի ղեկավարն ունի 3 տեղակալ, 1 օգնական և 1 խորհրդական: Համայնքի ավագանին 27 հունվարի 2022 թվականի N 02Ա որոշմամբ հաստատել է համայնքի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: Համայնքի ավագանին 27 դեկտեմբերի 2021 թվականի N 105Ա որոշմամբ հաստատել է համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը:

*Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն*

Ապարան քաղաքային համայնքում առաջին բազմաբնակարան շենքերի կառուցման շինարարությունը սկսվել է 1936թ-ից: Սոցիալիստական ժամանակահատվածում ծավալված պլանաչափ շինարարությունների ընթացքում կառուցվել են միօրինակ տեսք ունեցող բազմաբնակարան շենքեր: Ապարան քաղաքային համայնքի բնակարանային ֆոնդը ընգրկում է 243919 քմ մակերես, իսկ գյուղական բնակավայրերինը՝ 657786քմ: Ապարան քաղաքային համայնքում բնակարանային ֆոնդի սպասարկումը իրականացնում է համայնքապետարանի կոմունալ ծառայությունը: Ապարան քաղաքային համայնքում կա 11 վթարային շենք:

*Առևտուր և ծառայություններ*

Համայնքապետարանը մշտապես կարևորում և աջակցում է առևտրի, սպասարկման, ծառայությունների և զբոսաշրջության ոլորտի զարգացմանը և հստակ քայլեր ձեռնարկում ոլորտի պատշաճ և բնականոն աշխատանքի կազմակերպման համար: Առևտրի, սպասարկման և ծառայությունների ոլորտը սերտորեն կապված է համայնքի բնակիչների, նրանց սոցիալական կյանքի կազմակերպման և բարելավման հետ: Այդ իսկ պատճառով ձեռնարկվում են հատուկ միջոցառումներ ոլորտում ռեֆորմներ իրականացնելու համար, ինչը իր շոշափելի ազդեցությունը կթողնի համայնքի բնակիչների, համայնքում գործող ծառայությունների և համայնքում առևտրի ոլորտի ներկայացուցիչների վրա:Առաջիկա հինգ տարիների ընթացքում առևտրի,սպասարկման և զբոսաշրջության ոլորտում նախատեսվում է անել հետևյալ քայլերը և բարեփոխումները:

1) Կազմակերպել օրենքով սահմանված կարգով տեղական տուրքերի հարկումը և թույլտվությունների տրամադրումը առևտրի, սպասարկման և զբոսաշրջության ոլորտի ներկայացուցիչներից (խմիչքի և ծխախոտի վաճառք, վառելիքի, հեղուկ և սեղմված գազի վաճառք, դյուրավառ նյութեր, հանրային սննդի կազմակերպում, արտաքին գովազդ):
2) Ոլորտի բարելավման համար ստեղծել համայնքային շուկա, որտեղ կվաճառվի համայնքում և համայնքից դուրս մշակված և արտադրված ապրանքներ:
3) Համայնքում փոքր և միջին բիզնեսի զարգացման համար, տնտեսվարողների համար կազմակերպել սեմինար-դասընթացներ ոլորտի մասնագետների բանախոսությամբ:
4) Կազմակերպել պոլիէթիլենային տոպրակների օրենքով սահմանված չափի պարբերաբար ստուգումները:
5) Համայնքի տարածքում տեղադրել արտաքին գովազդի ժամանակակից վահանակներ, ինչը գեղեցիկ տեսք կտա համայնքի փողոցներին և վարձակալության ու հարկման միջոցով կավելացնի համայնքային բյուջեն:
6) Ստեղծել թանգարանային կառույց, որը իր մեջ կներառի համայնքային թանգարան,զբոսաշրջիկների համար նախատեսված սրահ և համայնքում արտադրված ապրանքների հանրայնացման և վաճառքի համար նախատեսված հարթակ:
7) Ստեղծել համայնքային տուրերի ծառայություն՝ համայնքում զբոսաշրջային ծառայության զարգացման համար:
8) Ստեղծել համայնքի լոգոյով թղթե կամ կտորից տոպրակներ,ինչը ոլորտից դուրս կմղի պոլիէթիլենային տոպրակները և համաչափություն կհաղորդի ոլորտին:
9) Արտաքին և սոցիալական կայքերի գովազդների միջոցով գովազդել և ներկայացնել համայնքում արտադրվող բանջարաբոստանային ապրանքները, կաթնամթերքը և այլն:
10) Հանրային սննդի օբյեկտներում ծառայությունների որակի բարելավման համար սահմանել նորմեր, օրինակ՝ միանման հագուստ,բարեկարգ և մաքուր սրահ և այլն, հանրային սննդի օբյեկտներին գործունեության թույլտվություններ տալ միայն վերոնշյալ նորմերի ապահովման դեպքում:

Վերոնշյալ կետերը ունեն առաջնային բնույթ, բայց կան նաև ենթակետեր, որոնք ներառված են առևտրի, սպասարկման և գովազդի ոլորտը համակարգող բաժնի ծրագրերում և պատշաճ իրականացվում են:

*Գյուղատնտեսական և արդյունաբերական արտադրանքի իրացման շուկաները*

| N | Անվանում | Քանակ | Արդյունաբերական արտադրանքը | Սպառման շուկա |
|---|---|---|---|---|
| 1 | «Նիզ գործարան» ՍՊԸ | 1 | Էլեկտրոնային միացման դետալներ | ՌԴ |
| 2 | Եվրոպական նմուշի դռների և պատուհանների արտադրություն | 2 | Տարբեր տեսականիներ | ՀՀ |
| 3 | «Ապարանի պանրի գործարան» ՓԲԸ | 1 | Կաթնամթերքի 10 անուն տեսականի | ՀՀ |
| 4 | Կաթնամթերքի վերամշակման Արտադրություն | 7 | Թան, պանիր, թթվասեր,մածուն,կաթ | ՀՀ |
| 5 | «Գնթունիք» ՍՊԸ | 1 | Հացամթերքի և հրուշակեղենի 300 տեսականի | ՀՀ |
| 6 | Հացամթերքի արտադրություն | 7 | Հացամթերք | ՀՀ |
| 7 | Զովացուցիչ ըմպելիքների արտադրություն | 2 | Լիմոնադի տեսականիներ | ՀՀ |
| 8 | Թռչնաբուծարան | 1 | | ՀՀ |
| 9 | Խոզաբուծարան | 1 | | ՀՀ |
| 10 | Մսամթերք | 20 | | ՀՀ |
| 11 | Օրգանիկ մեղվաբուծություն, ուսումնական կենտրոն | 1 | | ՀՀ,Արտերկիր |
| 12 | Չրի, մուրաբայի,կոմպոտների արտադրություն | 2 | | ՀՀ |
| 13 | Պեմզաբլոկի արտադրություն | 1 | | ՀՀ |
| 14 | Կիսաֆաբրիկատների արտադրություն | 3 | | ՀՀ |
| 15 | Սպանդանոց | 4 | | ՀՀ |
| 16 | Քարի հանք | 1 | | ՀՀ |
| 17 | Ավազի հանք | 1 | | ՀՀ |
| 18 | Ձկնաբուծություն | 7 | | ՀՀ |
| 19 | Ալկոհոլային խմիչքների արտադրություն | 1 | | ՀՀ |
| 20 | Ջերմոց | 1 | Վարդեր | ՀՀ,Արտերկիր |

*Մատուցվող ծառայություններ*

| N | Անվանում | Քանակ | Մատուցվող ծառայություններ |
|---|---|---|---|
| 1 | Առևտրի օբյեկտներ /խանութներ/ | 98 | Մթերք,հագուստ, շինանյութ, ծաղիկ, գրենական պիտույք |
| 2 | Համակարգչային ծառայություններ | 3 | Էլեկտրոնային վաճառք և համակարգչային ծառայություններ(Xerox) |
| 3 | Գազի և վառելանյութի լցակայան | 25 | Բնական սեղմված գազ և վառելանյութ, Պահեստամասերի խանութներ և վառելիքաքսայուղեր, տեխնիկական սպասարկում,Էլեկտրամոբիլների լիցքավորման կայաններ |
| 4 | Հանրային սնունդ | 15 | Սննդի իրականացում և մատուցում |
| 5 | Գեղեցկության սրահ | 5 | Տղամարդու և կանացի վարսահարդարում |
| 6 | Դեղատուն | 13 | Դեղորայքի վաճառք |
| 7 | Տրանսպորտային ծառայություն | 3 | Ապարան-Երևան միկրոավտոբուսի երթուղի, 2 տաքսի ծառայություն |
| 8 | Հանդիսությունների սրահ | 8 | Տարբեր ծիսակատարություններ |
| 9 | Հեռախոսային և ինտերնետ կապի օպերատոր | 3 | Բիլայն, Վիվասել , Յուքոմ, Միգտելեկոմ, Team, Արագած տելեկոմ |
| 10 | Բանկեր,վարկային կազմակերպություններ | 5/3 | Արդշին բանկ, Հայբիզնես բանկ, ՎՏԲ բանկ, ԱԿԲԱ բանկ, Յունիբանկ, Արեգակ ՈՒՎԿ, Կամուրջ ՈՒՎԿ, Սեֆ ՈՒՎԿ |
| 11 | Փոստի ծառայություն | 1 | Ընդհանուր ծառայություններ |
| 12 | Հյուրանոց | 2 | Գիշերակաց,սնունդ |
| 13 | Հյուրատուն | 11 | Գիշերակաց,սնունդ, տուրեր |
| 14 | Սպորտ համալիր | 1 | |

*Կրթություն,մշակույթ, սպորտ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ և սոցիալական պաշտպանություն*

Ապարան խոշորացված համայնքի կրթական համակարգը ներառում է 15 միջնակարգ, 1 ավագ և 6 հիմնական դպրոցները, և 5 մանկապարտեզները: Համայնքում գործող կրթական համակարգերից համայնքապատկան են 5 ՎՄՁԿ, որոնց գործունեությունը համակարգվում է համայնքապետարանի կողմից: 2016թ-ից համայնքներում մեկնարկել է վաղ մանկական զարգացման կենտրոնների ստեղծման ծրագիրը: Համայնքների խոշորացման արդյունքում անցել է Ապարան համայնքի ենթակայությանը,կենտրոններ այցելում են 74 երեխա: ՆՈՒՀ-երում նախադպրոցական կրթություն են ստանում 3-6 տարեկան մոտ 644 երեխա: Համայնքում գործող դպրոցների աշակերտների ընդհանուր թիվը կազմում է 3532, իսկ ուսուցիչների թիվը՝ 608: Ապարան քաղաքային համայնքում գործում է արվեստի դպրոց: Արվեստի դպրոցում ուսուցանվում է դաշնամուր, ջութակ, կիթառ, դհոլ, շվի, դուդուկ, դասական վոկալ, ժողովրդական վոկալ, քանոն, կարպետագործություն, խեցեգործություն, մաքրամե, բատիկա, դիզայն-

տիկնիկագործություն, ասեղնագործություն, գործում է նաև նվագախումբ: Դպրոցում սովորողների թիվը հասնում է 307-ի: Արվեստի դպրոց գործում է նաև Արագած բնակավայրում,որտեղ սովորողների թիվը կազմում է 156: Համայնքի մշակութային և երիտասարդական ակտիվ կյանքն ապահովում են մշակույթի տները: Ապարան քաղաքի մշակույթի տունն ունի 250 նստատեղ: Ապարան քաղաքային համայնքի ակտիվ մարզական կյանքն ապահովում են համայնքային մարզադպրոցը, հանրակրթական դպրոցների տարբեր սպորտային խմբակները, տարբեր մարզաձևերի ֆեդերացիաների տարածքային կազմակերպությունները: Ապարան համայնքի առողջապահական համակարգում գործում են 1 բժշկական կենտրոն, 2 առողջության կենտրոն, 1 ծննդատուն, 1 պոլիկլինիկա, 3 բժշկական ամբուլատորիա, 16 բուժակ-մանկաբարձական կետ, 4 ատամնաբուժարան, և 13 դեղատուն:

*Զբոսաշրջություն*

Հազարամյակների պատմություն ունեցող Ապարան համայնքը իր աշխարհագրական դիրքի առավելություններով, բնակլիմայական նպաստավոր պայմաններով, օդի, ջրի մաքրությամբ ու սառնորակությամբ, պատմական և մշակութային արժեք ներկայացնող հուշակոթողներով, ինչպես նաև ավանդական կերակուրներով, հյուրասեր ու հյուրընկալ կերպարներով, հավակնում է դառնալ հանրապետության զբոսաշրջային կենտրոններից մեկը:

Լեռնային ռելիեֆի պայմաններում Ապարանում հեռանկարային և չափազանց շահավետ կլինի լեռնագնացության, արկածային տուրիզմի, արտ տուրիզմի, էկոտուրիզմի, ինչպես նաև էթնոտուրիզմի զարգացումը:

Համայնքի տարածքում են գտնվում ՀՀ ամենաբարձր գագաթը՝ Արագածը(4090մ), ՀՀ ամենաբարձր Գեղարոտ ջրվեժը (17մ), բազմաթիվ պատմամշակութային կոթողներ, հուշարձաններ՝ եկեղեցական համալիրներ, մատուռներ, աղբյուրներ, որոնք ունեն հատուկ նշանակություն. զորավոր են ու բուժիչ:

Կարևոր նշանակություն ունեն նաև համայնքում իրականացվող խոշոր ներդրումային ծրագրերը՝

- Արագածի լեռնազոգին բանակավայրերի զարգացման ներդրումային ծրագիրը, որի ընդհանուր արժեքը կազմում է մոտ 200 մլն ԱՄՆ դոլար և որի արդյունքում նախատեսվում է տարեկան 436.436 զբոսաշրջիկի ներհոսք:
- <<Լուսագյուղ գյուղի զարգացում>> ծրագրով նախատեսվում է իրականացնել հայկական բարեկեցիկ գյուղի մոդելի ստեղծում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 4 մլրդ ՀՀ դրամ

- Եղիպատրուշում լեռնադահուկային համալիր ստեղծելու ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 30 մլրդ 22 դրամ և նախատեսվում է սպասարկել տարեկան 500.000 զբոսաշրջիկների

Թվարկված առավելությունները բացառիկ են, առանձնահատուկ և եզակի. դրանք կարող են դառնալ համայնքում զբոսաշրջության տարբեր ձևերի զարգացման ամուր հենքը, մասնավորապես՝ արկածային տուրիզմի: Ապարանում հնարավոր է իրականացնել և զարգացնել ZIP line թռիչքներ, նախատեսվում է (Ապարանի ձոր, Լուսագյուղի «Զախի ձոր», Արագածի, Թթուջրի և Ջրամբարի տարածքներում), ալպինիզմ, լեռնագնացություն, մարզական (լեռնադահուկային) սպորտ, զարգացնել էկոտուրիզմը և էթնոտուրիզմը:

*Ապարան համայնքում զբոսաշրջության զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները՝ մասնավորապես 2022-2026թ. նախատեսվում է.*

1) Ենթակառուցվածքների ստեղծում՝ հյուրանոցային համալիրների, հանգստյան տների կառուցում, հյուրատների ցանցի ստեղծում,որն արդեն ընթացքի մեջ է: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է բացել 11 հյուրատուն և Touch screen մոնիտորներ կտեղադրվեն համայնքի ամենամարդաշատ վայրերում, դրանց միջոցով կիրականացվ համայնքի լուսաբանումը և առաջմղումը:
2) Դեպի պատմամշակութային հուշարձաններ տանող ճանապարհների վերանորոգում և բարեկարգում:
3) Ապարան համայնքում պատմամշակութային արժեք ներկայացնող բազիլիկ տիպի եկեղեցական կառույցների, կիկլոպյան ամրոց բերդերի (Ապարան, Եղիպատրուշ, Երնջատափ, Ջրամբար, Չորագլուխ,) տարածքների ներառում համայնքի զբոսաշրջային գոտիներում:
4) Զբոսայգիների և խաղահրապարակների բարեկարգում, հանրային զուգարանների կառուցում համապատասխան տեղերում:
5) Տուրիստական կենտրոնի և վերկայքի ստեղծում:
6) Ամենամյա փառատոնների կազմակերպում՝ քանդակագործության միջազգային սիմպոզիում, Ապարանյան ձմեռ, ջրի, ավանդական ուտեստների, էթնո երաժշտության, հացի, խեցեգործության, Կոմիտաս վարդապետին նվիրված փառատոններ:
7) Շահագրգիռ ներդրողների համար համայնքի դիտարժան վայրերի, և դրանց վերաբերյալ կազմած ծրագրերի ներկայացում

8) Աղբյուրների տարածքների բարեկարգում (ցուցանակների տեղադրում,տեղեկատվական ուղեցույցների ստեղծում,արահետների տուրիստական քարտեզների կազմում):

*Գյուղատնտեսություն և հողօգտագործում*

Ապարան համայնքը գտնվում ՀՀ Արագածոտնի մարզի վարչական տարածքում: Գտնվում է Արագածի, Փամբակի և Ծաղկունյաց լեռնաշղթաների միջև: Ունի լեռնային, կտրտված մակերևույթ: Տարածքը ծովի մակերևույթից գտնվում է 1800-4090 մ է (Արագած) բարձրության վրա: Կան կրաքարի, կավահողի, շինարարական քարի պաշարներ( բազալտ, մարմար), հանքային ջրերի ելքեր: Քասաղ գետը սկիզբ է առնում համայնքի հյուսիսային հատվածից անցնում է Ապարան քաղաքի միջով և լցվում Ապարանի ջրամբար, որի միջոցով ոռոգվում են մարզի որոշ համայնքների այգիներ և հողատարածքներ: Կլիման ցամաքային է՝ բարեխառն: Ձմեռները տևական են՝ ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Բարձրադիր լեռնալանջերը ծածկված են ալպիական մարգագետիններով:

Համայնքի ընդհանուր հողատարածքը կազմում է 57036,93 հա, որից գյուղատնտեսական նշանակության՝46480,88 հա, այդ թվում՝ վարելահող 10579,95 հա, բազմամյա տնկարկներ՝ 5.90հա, խոտհարք՝ 1763,63 հա, արոտ՝ 25874,06 հա,այլ հողատեսքեր՝ 8257,34հա: Բնակարանային ֆոնդի հողատարածքը կազմում է 3067,41 հա,որից բնակելի կառուցապատման՝ 2294,61 հա: Արդյունաբերական և ընդերքօգտագործման հաղատարածքը կազմում է 649,54 հա, էներգետիկայի,կապի և տրանսպորտի համար նախատեսված է 109,66 հա, հատուկ պահպանվող տարածքներ՝ 208,74 հա,հատուկ նշանակության՝8.98հա,անտառային տարածքներ՝ 5354,03 հա, ջրային տարածք՝ 1157,69 հա: Հողային ստրուկտուրան փոփոխական է համեմատած այլ համայնքների հետ :

Մի փոքր հողակտորում կարող են լինել և՛ սևահող , և՛ անօգտագործելի տարածքներ՝ նաև քարքարուտներ : Գյուղատնտեսական հողատեսքերից օգտագործվում են հիմնականում վարելահողեր, խոտհարքներ, արոտներ:Մշակովի հողատարածքները հիմնականում անջրդի են, որը վատ է անդրադառնում հողի մշակության և բերքատվության վրա: Տարածաշրջանում հիմնականում մշակվում են հացահատիկային կուլտուրաներ՝ գարի, ցորեն, հաճար, որոնց բարձր բերքատվությունն ապահովում են ջրովի տարածքներում, 1 հա – ում միջին բերքատվությունը ջրովի տարածքում կազմել է (տարբեր հացահատիկային կուլտուրաների համար ) 20-40ց բերք ,իսկ անջրդի տարածքում 10-20 ց բերք: Կերային մշակաբույսերից մշակվում է առվույտ և կորնգան:

Հիմնականում բանջարաբոստանային կուլտուրաներից մշակվում են կարտոֆիլ, կաղամբ, սխտոր, ճակնդեղ, գազար և այլն, որոնք մշակվում են ջրովի հողատարածքներում: Ստացված բերքը մասամբ ապահովում է տարածաշրջանին, միայն կաղամբի և կարտոֆիլի ավելցուկն է արտահանվում հանրապետության տարբեր շուկաներ վաճառքի նպատակով :

Վերջին 10 տարիների ընթացքում զարգացման միտում ունի նաև պտղաբուծության բնագավառը: Հատապտուղներից՝ ազնվամորու տնկիների, ելակի թփերի, տնկարկներից՝ խնձորենու, տանձենու (Անտառային գեղեցկուհի), որոնք, հարմարվելով տեղական բնակլիմայական պայմաններին, տալիս են բարձր և որակով բերք: Համայնքում որոշակի

| Գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները, սպառման շուկան | | | |
|---|---|---|---|
| N | Արտադրանքի անվանում | Ծավալները /ցենտներ/ | Սպառման շուկան |
| 1 | Ցորեն | 490 հա | Ընտանիքի կարիքների |
| 2 | Գարի | 585 հա | Ընտանիքի կարիքների |
| 3 | Վարսակ | 323 հա | Ընտանիքի կարիքների |
| 4 | Հաճար | 180 հա | Ընտանիքի կարիքների |
| 5 | Կաղամբ | 57 հա | Ընտանիքի կարիքների |
| 6 | Սխտոր | 16 հա | Ընտանիքի կարիքների |
| 7 | Կարտոֆիլ | 663 հա | Ընտանիքի կարիքների |
| 8 | Բանջարանոցային մշակաբույսեր | Մոտ 74 հա | Ընտանիքի կարիքների |
| 9 | Տանձ | 3325 | Ընտանիքի կարիքների |
| 10 | Սալոր | 130 | Ընտանիքի կարիքների |
| 11 | Բալ | 140 | Ընտանիքի կարիքների |
| 12 | Ազնվամորի | 150 | Ընտանիքի կարիքների |

զարգացում է ապրում նաև մեղվաբուծությունը:

Արոտավայրերի ջրարբիացվածության մակարդակը մասնակի անբավարար վիճակում է, արոտները հիմնականում հեռագնա են, որը վատ է անդրադառնում անասնապահության, անասնաբուծության վրա: Գյուղատնտեսության զարգացմանը խոչընդոտում են գյուղատնտեսական մթերքի իրացման հետ կապված դժվարությունները, նախ և առաջ գյուղ. մթերքների ցածր գները , ոռոգման հետ կապված դժվարությունները, գյուղատնտեսության կարիքներին արձագանքելու անհրաժեշտ օղակների թեր զարգացած վիճակը կամ իսպառ բացակայությունը (ագրոսպասարկման, ֆինանսավարկային, ապահովագրական ) և այլն:

Շրջակա միջավայրի պահպանություն և աղետների ռիսկերի կառավարում

Ապարան խոշորացված համայնքը հավատարիմ մնալով իր նպատակներին և որդեգրած սկզբունքներին՝ 10 տարիների ընթացքում վերածվել «ամենականաչ» համայնքի, շարունակելու է առաջիկա 5 տարիների ընթացքում ևս բնության հետ ներդաշնակ և կայուն զարգացումը՝ խթանելով շրջակա միջավայրի վիճակի բարելավմանը, էկոհամակարգային ծառայությունների համակարգի ներդրմանը, կանաչապատման, աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացմանը, շրջակա միջավայրի պաշտպանության, բնապահպանության, էներգաարդյունավետության վերաբերյալ բնակչության շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացմանը ուղղված միջոցառումների կազմակերպմանը, էներգախնայող և էներգաարդյունավետ ծրագրերի իրականացմանը, որոնց արդյունքում համայնքը կդառնա իրենաբավ՝ անցում կատարելով վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործմանը:

| | |
|---|---|
| Աղբահանության արդյունավետ կառավարմանը ուղղված միջոցառումներ | Առաջնային է շարունակում մնալ համայնքում աղբահանության արդյունավետ կազմակերպման և կառավարման խնդիրը: Այդ նպատակով նախատեսվում են՝<br>○ իրականացնել համայնքի կենտրոնական աղբավայրի կառուցապատման աշխատանքներ<br>○ թափոնների տեսակավորման նպատակով փողոցներում տեղադրել համապատասխան աղբամաններ<br>○ ձեռք բերել համակցված բազմաֆունկցիոնալ նոր տեխնիկական, ավելացնել համայնքում առկա աղբամանների և աղբատար մեքենաների քանակը՝ ապահովելով աղբահանության արդյունավետ իրականացումը<br>○ ներդնել աղբի կառավարման մեխանիզմներ՝ ուսումնասիրելով միջազգային փորձը այն տեղայանացնել խոշորացված համայնքում<br>○ պարբերաբար իրականացնել հանդիպում-քննարկումներ բնակչության շրջանում աղբահանության հարցերով |

| | |
|---|---|
| Շրջակա միջավայրի պահպանմանը, քաղաքացիական պաշտպանության, աղետների ռիսկի արդյունավետ կառավարմանը ուղղված միջոցառումներ | Կարևոր խնդիրների շարքում են բնակչության շրջանում շրջակա միջավայրի պահպանման, քաղաքացիական պաշտպանության կազմակերպման, աղետների ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով հանրային իրազեկման բարձրացմանը նպատակաուղղված տարբեր միջոցառումների իրականացումը: <br> Այդ նպատակով նախատեսվում են՝ <br> ○ կազմակերպել էկոկրթական արտադպրոցական միջոցառումներ կարևորելով էկոկրթության դերը հատկապես նոր սերնդի շրջանում՝ բնության հանդեպ սրտացավ վերաբերմունք ձևավորելու տեսանկյունից <br> ○ ներգրավել համայնքապետարանի և համայնքի այլ կառույցների բնապահպանության ոլորտին առնչվող աշխատակիցներին մասնագիտական վերապատրաստման դասընթացների, գիտելիքների ու գործնական կարողությունների հզորացմանն ուղղված միջոցառումների <br> ○ պարբերաբար իրականացնել իրազեկման աշխատանքներ բնակչության շրջանում բնական աղետների, երկրաշարժերի հնարավոր ռիսկերի կանխագելման նպատակով <br> ○ իրականացնել համայնքի բոլոր վարչական տարածքներում շչակների տեղադրման աշխատանքներ <br> ○ աղետների ռիսկերի նվազեցման նպատակով իրականացնել հեղեղատների մաքրման աշխատանքներ <br> ○ իրականացնել ջրամբարների/ջրավազանների ամրապնդման և ընթացիկ ուսումնասիրություններին ուղղված աշխատանքներ <br> ○ առաջիկա հինգ տարիների ընթացքում իրականացնել գյուղական համայնքներում ջրավազանների կառուցման աշխատանքներ |

| | |
|---|---|
| Համայնքում կանաչ տարածքների պահպանմանը ուղղված միջոցառումներ | Առաջնային են համարվում համայնքում անտառատնկման, հողերի էրոզիայի ռիսկերի նվազեցման և համայնքային հողերի որակի բարելավմանը ուղղված աշխատանքների իրականացումը: Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) «Կենսաբազմազանության Ինտեգրված Կառավարում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում Ապարան համայնքի մի շարք բնակավայրերում՝ Լուսագյուղ, Քուչակ, Արայի, Վարդենուտ, Թթուջուր, Ջրաղացի խ. Ապարան բնակավայրերում իրականացվել են ավելի քան 100 հա անտառատնկման աշխատանքներ, որոնք պահանջում են շարունակական և հետևողական աշխատանքների իրականացում և այդ նպատակով առաջիկա հինգ տարիների ընթացքում համայնքում մշակվելու են մեխանիզմներ այն ավելի արդյունավետ դարձնելու համար: Այդ նպատակով նախատեսվում են՝<br>○ իրականացնել հողերի էրոզիայի ռիսկերի նվազեցման և համայնքային հողերի որակի բարելավմանը ուղղված աշխատանքներ<br>○ ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ համայնքապատկան այգիների, անտառների պահպանման նպատակով<br>○ տնկիների կպչողականության բարձացմանը նպատակով իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ<br>○ խթանել համայնք-մասնավոր հատված համագործակցությունը նպատակ ունենալով համագործակցել տարածքների պահպանման հարցերում<br>○ իրականացնել ամենամյա ծառատունկներ, վերատունկներ |

| | |
|---|---|
| Համայնք-բնակիչ կապի և տեղական ու միջազգային մակարդակով կազմակերպված տարբեր կոնֆերանսների միջոցառումների կարևորության մասին | Կարևորելով տեղական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը, առանձնակի ուշադրության կենտրոնում պահելով համայնք-բնակիչ կապը, հանրային լսումների, տեղեկատվական միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը Ապարան համայնքում բնակչության շրջանում իրականացվել և շարունակվում են իրականացվել տարբեր տեղեկատվական միջոցառումներ այլընտրանքային էներգիայի օգտագործման, էներգաարդյունավետության, էներգախնայողության, աղբահանության, բնապահպանական ծրագրերի վերաբերյալ։<br>Համայնքապետարանը առաջիկա հինգ տարիների ընթացքում ևս շարունակելու է ակտիվորեն մասնակցել տեղական և միջազգային մակարդակով կազմակերպված տարբեր կոնֆերանսների, միջոցառումների։ |

| | |
|---|---|
| Էներգաարդյունավետ էներգախնայող Ծրագրեր | Կարևորելով այլընտրանքային էներգիայի դերը համայնքի զարգացման գործընթացում Ապարան համայնքը շարունակելու է առաջիկա հինգ տարիների ընթացքում ևս մասնակցել էներգաարդյունավետ և էներգախնայող ծրագրերի իրականացմանը։ Ապարան խոշորացված համայնքը 2021թ. դիմել է «Սոցիալական Ներդրումների և Տարածքային Զարգացման Ծրագրի» կողմից հայտարարված դրամաշնորհային մրցույթին, որի արդյունքում ծրագիրը հավանություն է ստացել և նախատեսվում է Ապարան համայնքի 12 վարչական տարածքներում տեղադրել 165 կՎտ դրվածքային հզորությամբ 14 արևային ֆոտովոլտային կայաններ, որոնցից կօգտվեն համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող ենթակառուցվածքները և, որի արդյունքում կկրճատվի տարեկան մոտ 450 տոննա ածխաթթու գազի ($CO_2$) արտանետումների քանակը։ Ծրագրի արդյունքում համայնքապետարանը ամեն տարի իր բյուջեից խնայելու է շուրջ 27 000 000 ՀՀ դրամ և խնայված միջոցները 10 մլն ՀՀ դրամ ուղղվելու է, այն բնակիչների վարկային տոկոսների սուբսիդավորմանը, ովքեր լիզինգի միջոցով ձեռք կբերեն արևային կայաններ, իսկ մյուս մասը կուղղվի նոր ենթակայանների ստեղծմանը։<br>ԵՄ հանուն Հայաստանի կայուն էներգետիկայի» ծրագրի շրջանակներում ՀՀ-ում առաջին անգամ իրականացվել է «Կայուն էներգիայի օրեր» խորագրով ցուցահանդես, որի ընթացքում բաց տաղավարներում ցուցադրվել է ավելի քան մեկ տասնյակ արևային մատակարարների առաջարկած |

| | |
|---|---|
| | սարքավորումները, հնարավորություն ընձեռելով համայնքի բնակիչներին ծանոթանալու արևային էներգիայի օգտագործման միջոցներին: Համայնքում ստեղծվել է էներգաարդյունավետության շրջանառու նպատակային բյուջետային ֆոնդ որտեղ առաջիկա տարիներին էներգաարդյունավետ ծրագրերի շրջանակներում խնայված գումարը կփոխանցվի ֆոնդին, որն էլ իր հերթին կօգտագործվի համայնքի և բնակիչների կողմից: |

*Բնակչության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը*

Համայնքի ՏԻՄ-ի գործունեությունը դարձել է ավելի թափանցիկ, մասնակցային և հրապարակային, որը զգալիորեն նպաստում է համայնքի բնակչության իրազեկվածությանը ՏԻՄ-երի ընդունած որոշումներին և կատարած աշխատանքներին: Համայնքում պարբերաբար իրականացվում են հանրային լսումներ և քննարկումներ: Հնգամյա զարգացման և տարեկան աշխատանքային պլանները կազմվում են հիմնվելով բնակիչներից ստացված կարծիքների վրա: Ներդրումային խոշոր ծրագրերի և նախատեսվող այլ զարգացման ծրագրերի վերաբերյալ նախապես իրականացվում են հանրային քննարկումներ բնակիչների առաջարկները լսելու, առաջացած հարցերին պատասխանելու և հետագա ապատեղեկատվություններից խուսափելու նպատակով:

Համայնքում ավելանում են շահագրգիռ անձիք և նախաձեռնող խմբերը, դեռևս 2017 թվականից համայքնում գործում էր երիտասարդների նախաձեռնող խումբ, որը շարունակաբար համալրում է իր կազմը, համայնքի ղեկավարին կից ստեղծվել է կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմին, որը ակտիվ գործունեություն է ծավալում: Նախաձեռնող խմբերը և ուսանողական խորհուրդը ակտիվորեն մասնակցում են համայնքի զարգացման գործին:

## 2.3.ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

2018-2022 թվականներին համայնքում իրականացվել են, դեռևս ընթացքի մեջ են և նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը, միջոցառումները և բարեկարգման աշխատանքները.

- Արվեստի դպրոցների և մշակույթի տների բարեկարգում
- Բազմաբնակարան շենքերի բարեկարգում, բակերից տնակների հեռացում, խաղահրապարակների կառուցում, արտաքին տեսքի ձևավորում և այլն
- Ասֆալտապատման աշխատանքներ համայնքի բոլոր վարչական տարածքներում
- Բարեկարգվել է գիշերային լուսավորության ցանցը ամբողջ համայնքում
- Շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված ծրագեր, տնկարկներ, կանաչապատման աշխատանքներ և LED լուսավորության լամպեր և այլն
- Հստակ անցում այլընտրանքային էներգիայի օգտագործմանը, էներգախնայողությանը և էներգաարդյունավետությանն ուղղված ծրագրեր
- Ապարան համայնքի բոլոր վարչական տարածքներում այժմ իրականացվում է արդյունավետ աղբահանություն, ներդրվել են աղբահանության արդյունավետ մեխանիզմներ, տեղայնացնելով տվյալ բնակավայրին և հաշվի առնելով տվյալ բնակավրի կարիքները և բնակիչների նախընտրելի տարբերակը
- Մանկապարտեզների բարեկարգում և նոր մանկապարտեզների կառուցում, վաղ մանկական զարգացման կենտրոնների հիմնում, բոլոր համայնքերում նախադպրոցական կրթության ապահովում
- Բոլոր վարչական տարածքներում խաղասրահների ապահովում և բարեկարգում
- Յուրաքանչյուր բնակավայրում հանդիսությունների սրահների կառուցում և վերակառուցում
- Ոռոգման ցանցի վերանորոգում և նորերի կառուցում
- Խմելու ջրի ցանցերի վերանորոգում և նորերի անցկացում
- Գազաֆիկացում 5 բնակավայրերում՝ Թթուջուր, Չորագլուխ, Ջրամբար, Եղիպատրուշ, Մելիքգյուղ
- Ներտամիջյան ճանապարհների բարեկարգում
- Համայնքային ջրավազանների և առուների բարեկարգում և նորերի ստեղծում
- Մշակութային խմբակների ստեղծում
- Նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների համար նոր ծառայությունների մատուցում՝ հոգեբան, լոգոպեդ, ձեռնարկատիրական հմտություն, IT
- Մարզադպրոցների բարեկարգում, ջեռուցում և նորերի կառուցում
- Խաղահրապարակների և մարզվելու տարածքների ստեղծում՝ համապատասխան մարզասարքերով

- Քաղաքային բնակավայրի կանաչապատում, ծառատունկներ ամբողջ համայնքում, համայնքային անտառների ստեղծում

2022-2026 թթ. նախատեսվում է իրականացնել հետևյալ սոցիալ-տնտեսական ծրագրերը, որոնք ամեն տարի կարտացոլվեն տարեկան աշխատանքային պլաններում.

| |
|---|
| Հանդիսությունների սրահների, կառուցում, վերանորոգում և անհրաժեշտ գույքի ձեռքբերում, սանհանգույցի կառուցում |
| Ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում |
| Ջրահեռացման առուների կառուցում |
| Լուսավորություն |
| Խմելու ջրի ներքին ցանցի կառուցում և նորոգում |
| Ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման մեխանիզմների ներդրում |
| Աղբավայրի ցանկապատում |
| Սելավատարերի և դրանց վրա կամուրջների կառուցում |
| Գերեզմանատների ցանկապատում |
| Աղբամանների տեղադրում |
| Կոյուղու անցկացում և վերանորոգում |
| Արոտավայրերի ճիշտ կառավարում |
| Գազաֆիկացում և եղած ցանցի ընդլայնում |
| Ոռոգման ցանցի կառուցում և վերակառուցում |
| Մանկապարտեզների կառուցում և այլընտրանքային նախադպրոցական կրթության ապահովում |
| Եկեղեցու ջեռուցում |
| Խաղահրապարակի կառուցում |
| Համայնքային հուշարձանների կառուցում և տարածքների բարեկարգում |
| Խմոցների կառուցում |
| Դաշտամիջյան ճանապարհների կառուցում և հարթեցում |
| Մշակույթի տան, վերանորոգում |
| Սպորտային մրցաշարերի կազմակերպում |
| Արվեստի դպրոցի վերանորոգում, գազաֆիկացում |
| Ներհամայնքային տրանսպորտի ապահովում |
| Գյուղմթերքի շուկայի ստեղծում |
| Խմելու ջրի գլխամասերի կառուցում և վերանորոգում |
| Վարչական շենքերի վերանորոգում, գույքի ձեռքբերում |
| Ժամանցի սրահների վերանորոգում, գույքի ձեռքբերում |
| Ներհամայնքային ճանապարհների խճացում |
| Ջրահավաք ավազանների կառուցում և ցանկապատում, փականների փոխարինում |
| Ծառատունկ |
| Արագության խոչընդոտների տեղադրում |
| Ֆուտբոլի դաշտի, մարզահրապարակի կառուցում և վերանորոգում |
| Ոռոգման ջրի պոմպակայանի կառուցում |
| Գյուղտեխնիկայի և հատուկ բազմաֆունկցիոնալ ձեռքբերում |
| Ջրամբարների վերանորոգում |
| Մայթերի վերանորոգում |
| Կանգառի կառուցում |
| Ամբուլատորիայի ջեռուցում |
| Մեքենատրակտորային պարկի ստեղծում |
| Կրթական սոցիալական ՀՈԱԿ-ի ստեղծում |

2018 թվականից ի վեր ամեն տարի իրականացվել և իրականացվելու են հետևյալ միջոցառումներն ու փառատոնները.

- Քանդակագործության միջազգային սիմպոզիում
- Ապարանյան ձմեռ մարզամշակութային փառատոն
- Ձնամարտի միջազգային առաջնություն
- Ջրի փառատոն
- Էթնո երաժշտության փառատոն
- Ավանդական ուտեստների փառատոն
- Բաշ-Ապարանի հերոսամարտին նվիրված միջոցառումներ
- Բանակի օրվան նվիրված միջոցառումներ
- Գիրք նվիրելու օրվան նվիրված միջոցառումներ
- Զատկական միջոցառումներ
- Երեխաների պաշտպանության օրվան նվիրված միջոցառումներ
- Մարզական և սեղանի խաղերի մրցաշարեր

➢ Ներդրումային ծրագրեր

- Արագածի լեռնագոգին էկո-գյուղատնտեսական, տուրիստական և լեռնադահուկային ուղղվածություններով տարածքների զարգացման ներդրումային ծրագիր
- Լուսագյուղում Հայկական բարեկեցիկ գյուղի մոդելի ստեղծում
- Եղիպատրուշում լեռնադահուկային համալիրի ստեղծում, որի շրջանակներում կառուցվելու է հյուրանոց, ճոպանուղի, խաղատուն և այլն
- Սարալանջում ամբողջությամբ ավտոմատացված 4-րդ սերնդի ջերմատուն, որն առաջարկում է 18 տեսակի ՀՀ-ում եզակի վարդեր
- Վարդենիսում <<Մանկական թանգարան>> ներդրումային ծրագիր
- Լուսագյուղի <<Վերի վանք>> կոչվող եկեղեցու տարածքում կրթական կենտրոնի ստեղծում
- Հարթավանում <<Անտառային գեղեցկուհի>> տեսակի տանձի ինտենսիվ այգիների ստեղծում, սառնարաններում մթերում,վերամշակում և փաթեթավորում
- Շողակնում հանգստի գոտու ստեղծում՝ ձիավարություն, հեծանիվ, ամենագնացներ, ձնագնացներ, արժեքը՝ 400 հազար ԱՄՆ դոլար, տարածքը՝ 12,5 հա
- Ապարանում, տարածաշրջանում առաջին գյուղատնտեսական քոլեջի հիմնում
- Վարդենիսում և Քուչակում խմելու ջրի արտադրամասերի հիմնում
- Արագածում սպորտային համալիրի հիմնում

➢ Դրամաշնորհային ծրագրեր

- Երիտասարդական կենտրոնի հիմնում
- Հյուրատների ստեղծում և առաջմղում
- 165 կվ դրվածքային հզորությամբ արևային էներգիայի արտադրության ենթակայանի ստեղծում
- 7 միավոր տեխնիկայի ձեռքբերում
- Ավտոաշտարակի և ձնագնացի ձեռքբերում Ծաղկահովիտի հետ միջհամայնքային համագործակցությամբ
- <<Քաղաքացու բյուջե>> ծրագրի շրջանակներում Ապարանի քաղաքային այգու բարեկարգում
- << Եվրասիա ԲՀԿ>> կազմակերպությունը համայնքին նվիրաբերել է կլոմպրեսատոր
- ԳՄՀԸ կազմակերպությունը համայնքին նվիրաբերել է աղբամաններ, հիմնել է տնկարաններ, ջրի պոմպ, խողովակներ և այլն:
- Ապարանի համայնքապետ Կարեն Եղիազարյանի անձնական միջոցներով համայնքապետարանի շենքի և արվեստի դպրոցի վերանորոգում, Ապարան քաղաքի Բաղրամյան փողոցում լուսավորության անցկացում, դարբնազործ լուսայուների տեղադրում,ասֆալտապում, Շենավանի և Ապարանի Սուրբ խաչ եկեղեցիների բակերի բարեկարգում, Ամանորյա զարդարանք
- Համայնքին նվիրաբերվել է մոնիտոր, որը տեղադրված է Ապարանի քաղաքային հրապարակում

Ապարան համայնքը սերտորեն համագործակցում է տարբեր միջազգային և տեղական կազմակերպությունների հետ: Առաջիկա հինգ տարիների ընթացքում նախատեսվում է ամրապնդել հին կապերը, հաստատել նոր համագործակցային կապեր տարբեր կառույցների և քույր քաղաքների հետ:

2.4. Պատվիրակված ծառայություններ

Համայնքները, համայնքային կազմակերպությունների և համայնքապետարանների աշխատակազմերի միջոցով, բնակչությանը տրամադրում են բազմաթիվ ծառայություններ՝ աղբահանություն, սանիտարական մաքրում, համայնքի տարածքի կանաչապատում, համայնքի բարեկարգում, ճանապարհների կառուցում և շահագործում, ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպում, համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենների

տրամադրում և այլն: Համայնքներն ունեն լիազորություններ համայնքային ծառայությունների տրամադրումը պատվիրակելու մասնավոր կազմակերպությունների:

Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) «Կենսաբազմազանության Ինտեգրված Կառավարում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում Ապարան համայնքի մի շարք բնակավայրերում՝ Լուսագյուղ, Քուչակ, Արայի, Վարդենուտ, Թթուջուր, Չորագլուխ, Ապարան բնակավայրերում իրականացվել են ավելի քան 100 հա անտառատնկման աշխատանքներ: Տնկարանների կառավարումը, մշակումն ու պահպանումը հանձնվել է մասնավորին, ով փոխարենը համայնքին տրամադրում է տարեկան 5000 տնկանյութ: Սա իսկապես մի մեծ հնարավորություն է բոլոր այն մասնավոր գործընկերների համար , ովքեր կցանկանան համագործակցել

2.5. Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծություն և ֆինանսական կանխատեսումները

Համայնքի 2018 թվականի համայնքի եկամուտները կազմել է 647 185 384 ՀՀ դրամ, իսկ 2019 թվականին՝ 770 543 910 ՀՀ դրամ, այսինքն 2019 թվականին եկամուտներն ավելացել են 19%-ով, 2020 թվականին կազմել է 1 052 530 474 ՀՀ դրամ, ավելացել՝ 36,5 %-ով, 2021 թվականին կազմել է 1 046 976 929, պակասել՝ 0,5 %-ով:

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

| Հ/հ | ՄՈՒՏՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2021թ. փաստ. | 2022թ. հաստ. | 2023թ. կանխ. | 2024թ. կանխ. | 2025թ. կանխ. | 2028թ. կանխ. | 2022թ. 2021թ. նկատ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Անշարժ գույքի հարկ | 58604,7 | 68400,0 | 75240,0 | 82764,0 | 91040,4 | 100144,0 | 1,16% |
| 2 | Տուրքեր | 33573,3 | 40450,0 | 44594,0 | 49053,0 | 53958,0 | 59355,0 | 10,4% |
| 3 | Պաշտոնական դրամաշնորհներ | 708330,0 | 741905,2 | 779000,5 | 817950,5 | 858848,0 | 901790,4 | 4,7% |
| 4 | Այլ եկամուտներ | 45224,1 | 62740,0 | 69014,0 | 75915,4 | 83506,0 | 91857,0 | 38,7% |

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

**ա/ըստ գործառնական դասակարգման**

| Հ/հ | Ծախսի անվանում | 2021թ. փաստ. | 2022թ. հաստ. | 2023թ. կանխ. | 2024թ. կանխ | 2025թ. կանխ. | 2026թ. կանխ. | 2022թ. 2021թ. նկատ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծախսեր | 386469,5 | 453545,0 | 498899,5 | 548789,4 | 603668,4 | 664035,2 | 17,3 |
| 2 | Տնտեսական հարաբերություններ | 110331,9 | 281476,0 | 309623,6 | 340585,9 | 374644,5 | 412109,0 | 155% |
| 3 | Բնակարանային շինություն և կոմունալ ծառայություն | 236879,0 | 480553,0 | 528608,3 | 581469,1 | 639616,0 | 703577,6 | 102,8% |
| 4 | Հանգիստ, մշակույթ, կրոն | 24242,0 | 51655,0 | 56820,5 | 62502,5 | 68752,8 | 75628,0 | 113% |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | Կրթություն | 171408,5 | 229695,0 | 252664,5 | 277930,9 | 305724,0 | 336296,4 | 34% |
| 6 | Սոցիալական պաշտպանություն | 8732,0 | 13000,0 | 14300,0 | 15730,0 | 17303,0 | 19033,3 | 48,8% |
| 7 | Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր | 178000,0 | 204800,0 | 225280,0 | 247808,0 | 272588,8 | 299847,6 | 15% |

**բ/ըստ տնտեսագիտական դասակարգման**

| Հ/հ | Ծախսի անվանում | 2021թ. փաստ. | 2022թ. հաստ. | 2023թ. կանխ. | 2024թ. կանխ | 2025թ. կանխ. | 2026թ. կանխ. | 2022թ. 2021թ. նկատ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ա | **Ընթացիկ ծախսեր** | | | | | | | |
| 1 | Աշխատանքի վարձատրություն | 196745,2 | 154907,0 | 170397,7 | 187437,4 | 206181,2 | 226799,3 | |
| 2 | Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում | 130061,3 | 144278,6 | 158706,4 | 174577,1 | 192034,8 | 211238,3 | 11% |
| 5 | Դրամաշնորհներ | 396494,7 | 538282,4 | 592110,6 | 651321,7 | 716453,8 | 788099,2 | 35,7% |
| 6 | Սոցիալական նպաստներ և կրթաթոշակներ | 12371,9 | 20200,0 | 22220,0 | 24442,0 | 26886,2 | 29574,8 | 63% |
| 7 | Այլ ծախսեր | 183650,0 | 206700,0 | 227370,0 | 250107,0 | 275117,7 | 302629,4 | 12,5% |
| Բ | **Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր** | | | | | | | |
| 1 | Հիմնական միջոցներ | 297700,8 | 450603,7 | 495664,0 | 545230,4 | 599753,5 | 659728,8 | 51% |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Գ | **Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր** | | | | | | | |
| 1 | Հիմնական միջոցների իրացումից մուտքեր | 160000,0 | 362000,0 | 398200,0 | 438020,0 | 481822,0 | 530004,2 | 126% |

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԸ

| Հ/հ | Ցուցանիշի անվանումը | 2021թ. փաստ. | 2022թ. հաստ. | 2023թ. կանխ. | 2024թ. կանխ | 2025թ. կանխ. | 2026թ. կանխ. | **2022թ. 2021թ.** նկատ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդր/հազար դրամ | 178000,0 | 174800,0 | 180000,0 | 189000,0 | 192000,0 | 197000,0 | |

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՆ ՕՐԵՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏՐԱՆՍՖԵՐՆԵՐԸ

| Հ/հ | Տրանսֆերի անվանումը | 2021թ. փաստ. | 2022թ. հաստ. | 2023թ. կանխ. | 2024թ. կանխ | 2025թ. կանխ. | 2026թ. կանխ. | 2022թ. 2021թ. նկատ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **Ընդամենը տրանսֆերներ** | | | | | | | |
| 1 | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 708330,0 | 741905,2 | 816095,7 | 897705,2 | 987475,8 | 1086223,4 | 4,7% |
| 2 | Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ,այդ թվում | 4200,7 | 1961,0 | 2157,1 | 2372,8 | 2610,0 | 2871,1 | |

2.6 Զարգացման խոչնդոտներ և դժվարություններ

- Համավարակ
- Պատերազմ
- Համայնքում անհրաժեշտ մասնագետների բացակայություն
- Համայնքի բնակիչների հարկային պարտավորությունների կատարման ոչ բավարար մակարդակ,
- Համայնքի հողային և ջրային ռեսուրսի ոչ ճիշտ օգտագործում,
- Գյուղատնտեսական արտադրանքի սպառման ցածր ցուցանիշ,
- Արտագաղթ
- Որակյալ արտադպրոցական կրթություն իրականացնելու համար հիմնական խոչնդոտներից են կրթական հաստատության շենքային անբարենպաստ պայմանները, կամ դրանց բացակայությունը վարչական շրջաններում
- Ներդրումներ իրականացնելու համար երկար վարչարարական գործընթաց
- Համայնքում մեծ թիվ են կազմում սոցիալապես անապահով ընտանիքները՝ 635, թոշակառուները և գործազուրկները՝ (գրանցված գործազուրկներ՝ 156, որոնցից կին՝ 116, տղամարդ՝ 40)

2.7.Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների SWOT վերլուծություն

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
| --- | --- |
| • Աշխարհագրական դիրք՝ Ապարան համայնքը մոտ է Երևանին, գտնվում է բարձր լեռնային գոտում, զբոսաշրջության (հատկապես ձմեռային և արկածային) համար ունի բարենպաստ կլիմա՝ երկարատև ձմեռներ, ձյան հաստ ծածկույթ:<br>• Ապարան համայնքը հայտնի է իր սառը և մաքուր ջրով: Այստեղ շատ են սառնորակ աղբյուրները<br>• Գործող հանքավայրերի բացակայություն, մաքուր օդ, ալպիական մարգագետինները<br>• Եզակի տեսարժան վայրեր՝ մ.թ.ա 2-րդ դարի բնակավայրեր, պատմամշակութային հուշարձաններ և կոթողներ<br>• Համայնքում է գտնվում ՀՀ ամենաբարձր գագաթը՝ Արագած լեռը և Հայաստանում բարձրությամբ առաջին ջրվեժը<br>• Ամենամյա միջազգային փառատոններ՝ քանդակագործության միջազգային սիմպոզիում, Ապարանյան ձմեռ, ջրի փառատոն<br>• Խոշոր ներդրումային ծրագրեր<br>• Ջրային մեծ պաշարներ<br>• Հայաստանում մեծ ճանաչում ունեցող պրոդուկտներ՝ Ապարանի թան, Ապարանի ջուր, Գնթունիք, Ապարանի կաթնամթերք<br>• Որակյալ մսամթերք և գյուղմթերք՝ կարտոֆիլ, կաղամբ<br>• Նորագույն տեխնոլոգիաներով հագեցած ջերմոց, թռչնաբուծարան, խոզաբուծարան<br>• Ակտիվ երիտասարդություն, նախաձեռնող խմբեր<br>• Սերտ համագործակցություն միջազգային և տեղական կազմակերպությունների հետ | • Ցրտաշունչ կլիմա<br>• Հյուրանոցների/հյուրատների/ բացակայություն<br>• Զբոսաշրջային վայրերում անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայություն՝ ցուցանակներ,աղբամաններ և այլն<br>• Անհրաժեշտ մասնագետների բացակայություն<br>• Անջրդի գյուղ.նշանակության հողեր<br>• Ոռոգման ցանցի բացակայություն<br>• Գյուղնշանակության տեխնիկայի բացակայություն<br>• Համայնքի սեփական եկամուտների սղություն<br>• Սահմանված նորմերին չհամապատասխանող աղբավայրեր<br>• Անանցանելի դաշտամիջյան ճանապարհներ<br>• Փոքր բնակավայրերում մանկապարտեզների, մշակութային օջախների բացակայություն<br>• Մաքրման կայանների բացակայություն<br>• Հեռագնա արոտներում խմոցների բացակայություն<br>• |

| | |
|---|---|
| • Արևային օրերի քանակ<br>• ՏԻՄ-ի աշխատանքների թափանցիկություն և բնակիչների ակտիվ մասնակցություն | |
| Հնարավորություններ<br>• Չօգտագործվող ալպիական գոտիներ, լեռնաշղթաներ<br>• Խոշոր ներդրումային ծրագրեր<br>• Տեսարժան վայրեր, որոնք դեռևս հայտնի չեն<br>• Զբոսաշրջության նոր զարգացող ճյուղեր՝ լեռնագնացություն, արտ-տուրիզմ<br>• Նոր ստեղծվող հյուրատներ, սննդի կետեր և այլ ծառայություններ<br>• Ոչ ֆորմալ կրթության կենտրոններ<br>• Արոտավայրերի առկայություն<br>• Գյուղնշանակության չմշակվող հողեր<br>• Այլընտրանքային էներգիայի անցում<br>• Ներդրումային ծրագրերի հարակից ճյուղերի զարգացում՝ նոր ծառայությունների, բիզնեսների ստեղծում<br>• Մարդկային կապիտալ, աշխատուժ<br>• Ջրային ռեսուրսների մեծ քանակություն<br>• M3 միջպետական մայրուղի<br>• Start up School_ի առկայություն<br>• Բարեկարգված և որակյալ ենթակառուցվածքներ՝ ճանապարհներ, լուսավորություն, մանկապարտեզներ, մարզադպրոցներ, մշակույթի տներ<br>• Գեղեցիկ բնություն, մաքուր օդ | Սպառնալիքներ<br>• Սեյսմիկ ռիսկի միջին մակարդակ<br>• Ժողովրդագրական բացասական միտում՝ արտագաղթ<br>• Ցրտաշունչ և երկարատև ձմեռ<br>• Գյուղատնտեսական արտադրանքի բացասական վաքազիծ<br>• Անջրդի հողատարածքներ<br>• Գյուղատնտեսական հողերի ոչ պատշաճ օգտագործում |

3.1 Համայնքի զարգացման հեռահար նպատակի (տեսլականի )սահմանում

Համայնքի զարգացման տեսլական

*Ապարանը որպես զարգացած օրգանիկ գյուղատնտեսական համայնք, էկո, էթնո, արտ-տուրիզմի կենտրոն*

3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակների սահմանում

Սահմանված տեսլականին հասնելու համար համայնքը սահմանում է հետևյալ անմիջական նպատակները՝

- Ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում մինչև 60%, դաշտամիջյան ճանապարհների հարթեցում
- Խմելու ջրի ցանցի վերանորոգում և նորերի կառուցում
- Գիշերային լուսավորության անցկացում բոլոր բնակավայրերում մինչև 90%
- Բոլոր բնակավայրերի գազաֆիկացում՝ 100%
- Աղբահանության արդյունավետ մեխանիզմների ներդրում բոլոր բնակավայրերում
- Համայնքում ոռոգման ցանցի անցկացում, հատկապես գյուղնաշանակության հողատարածքներում
- Համապատասխան աղբավայրերի կառուցում
- Համայնքում շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված ծրագրեր իրազեկման միջոցառումներ և այլն
- Համայնքի բոլոր բնակավայրերում նախադպրոցական կրթության ապահովում
- Համայքնում պոտենցիալ ունեցող սպորտաձևերի զարգացման ծրագրեր
- Արտադպրոցական խմբակների ստեղծում, ինչպես նաև նոր ծառայությունների մատուցում՝ յոգոպետ, հոգեբան, սոց. աշխատողներ, երկարօրյա դասապատրաստումներ , IT, լեզուների ուսուցման խմբակներ և այլն
- Ապարանը դարձնել բազմաեսակ մշակութային միջոցառումների անցկացման համայնք
- Հատուկ խնամք և այլ օժանդակող ծառայություններ տարեցների և խոցելի խմբերի համար
- Աջակցություն սոցիալապես անապահով և ազատամարտիկների ընտանիքներին, հատուկ կարիքներով երեխաներին, բարձր առաջադիմությամբ ուսանողներին
- Արոտների արդյունավետ կառավարում
- Համայնքում օրգանիկ գյուղատնտեսության զարգացում
- Բարձրարժեք գյուղատնտեսության մեթոդների ներդնում
- Գյուղնշանակության հողերի նպատակային և արդյունավետ օգտագործում

- Ամբուլատորիաներում ծառայությունների բարելավում, անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում
- Ավանդույթ դարձած ամենամյա մարզական և մշակութային միջոցառումների և փառատոնների անցկացում
- Սկսնակ փոքր և միջին ձեռնարկություններին տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն, խրախուսական միջոցառումների կազմակերպում
- Սերտ համագործակցություն համայնք-մասնավոր-բնակիչ-միջազգային կազմակերպություններ
- Ներդրողների համար հատուկ առաջարկների մշակում
- Էներգաարդյունավետության և էներգախնայողությանն ուղղված ծրագրեր և անցում արևային էներգիայի օգտագործմանը
- Համայնքի կանաչապատում, անտառային ծածկույթի ավելացում
- Համայնքում արկածային, լեռնային, էկո, էթնո, արտ և ագրոտուրիզմի ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում՝ հյուրատնային, ուղեկցորդական, պեղումային ծառայությունների մատուցում
- «InfoGallery» համայնքային կենտրոնի ստեղծում, որտեղ կցուցադրվի և կվաճառվի համայնքի տեղական արտադրանքը
- Ներհամայնքային ճանապարհների, փողոցների բարեկարգում և նորոգում, ջրահեռացման և գիշերային լուսավորության համակարգի անցկացում և վերանորոգում, ճանապարհային փահանակների և կանգառների ժամանակակից տաղավարների տեղադրում
- ՏԻՄ երի և համայնքի բնակչության փոխադարձ համագործակցության և հանրային բնարկումների արդյունքում ժողովրդավարության ամրապնդում և համախմբվածություն, տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների, մասնավորապես կանանց մասնակցության բարձրացում
- Պատսպարման վայրերի, թաքստոցների կառուցում, շշակների ձեռքբերում
- Աղետների և ռիսկերի կառավարման մեխանիզմների ներդրում, անհրաժեշտ քանակությամբ գույքի ձեռքբերում
- Համայնքի վարչական տարածքներում քաղաքացիների սպասարկման ծառայությունների բարելավում
- Համայնքի ճանաչողության ձեռքբերում Հայաստանում և ՀՀ սահմաններից դուրս

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում ներկայում արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման՝ ՏԻՄ- երի կողմից ընտրված ռազմավարությունից, առաջիկա հինգ տարիների համար սահմանված հիմնական նպատակներից և ԲԱԽ-երի, ՀՈԱԿ-ների կողմից արված առաջարկություններից, համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ- ի կողմից

քննարկվել և որոշվել է առաջարկվող ծրագրերի ցանկը՝ներառելու համայնքի 2018-2022թթ. ՀԶՀԾ ում:

Առաջարկվող ծրագրերի առաջնահերթությունները որոշելու նպատակով, ՀԶՀԾ- ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից սահմանվել են ծրագրերի գնահատման հետևյալ չափանիշները՝ շահառուների թիվ 38, համայնքի կարողությունների հզորացում,հանրային հետաքրքրություն, հարատևություն /կենսունակություն/, հիմնական միջոցների պահպանում,համայնքի կարողությունների հզորացում: Կիրառելով ծրագրերի առաջնահերթությունների որոշման մասնակցային կառավարման մեթոդը և օգտագործելով ծրագրերի գնահատման սահմանված չափանիշները՝ ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ն իր նիստում քննարկել և որոշել է վերևում առաջարկված համայնքային ոլորտային ծրագրերի առաջնահերթությունները:

4. ՀՀԶԾ ֆինանսավորում

Ծրագրերի ֆինանսավորումն իրականացվելու է ներգրավելով հնարավոր ֆինանսնական բոլոր աղբյուրները:

Մասնավորապես՝

- Համայնքի սեփական եկամուտներ
- Պետության կողմից տրամադրվող սուբվենցիաներ
- Դոնոր կազմակերպություններ
- Շահագրգիռ անձիք՝ բարերարներ

5.ՀՀԶԾ մշտադիտարկումը (մոնիթորինգ)

Իրականացվող բոլոր ծրագրերիn համար մշակվել է մոնիթորինգի անցկացման կարգ: Մոնիթորինգը կառավարչական գործիք է, որը հնարավորություն է տալիս հսկել ծրագրերի կատարման ընթացքը և անհրաժեշտ փոփոխություններ նախաձեռնել: Մոնիթորինգն իրականացվում է համապատասխան կատարողականի ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ հավաքագրելու և ցուցանիշների փաստացի արժեքները թիրախային արժեքների հետ համեմատելու միջոցով: Համեմատության միջոցով հնարավոր է լինում չափելի դարձնել ծրագրի կարևորության մակարդակը, առաջընթացը, հաջողության աստիճանը, ծրագրով պայմանավորված փոփոխությունները կամ գնահատելի դարձնել ծրագիրն իրականացնողի կատարողականը: ՀՀԶԾ մոնիթորինգի համար մշակված մոնիթորինգի պլանը, որում սահմանում է մոնիթորինգային ցուցանիշների հավաքագրման հաճախականությունը, աղբյուրն ու մեթոդը կցվում է հավելվածում: Մոնիթորինգային

ցուցանիշների մասին տեղեկություններ պետք է հավաքագրվեն կիսամյակային կամ տարեկան կտրվածքով: Մոնիթորինգի հաշվետվությունը համայնքի ավագանուն պետք է ներկայացվի ամեն տարի, հաշվետու տարվան հաջորդող տարվա առաջին եռամսյակում: Հաշվետվության մեկ օրինակ, միայն հեռահար և անմիջական նպատակների մասով, ուղարկվում է ՀՀ ՏԿԶՆ տեղական ինքնակառավարման վարչություն: Ծրագրի մոնիթորինգի պլանը հեռահար և անմիջական նպատակների համար ցուցանիշներով, կազմված է ՀՀ ՏԿԶՆ կողմից: Ուղղակի արդյունքների և ռեսուրսների ցուցանիշները և ցուցանիշների թիրախային արժեքները սահմանված են համայնքի ղեկավարի կողմից:

ՀՀԶԾ վերաբերյալ իրազեկում

Համայնքի ավագանու կողմից հաստատվելուց հետո, ՀՀԶԾ-ն հրատարակվում է www.aparan.am կայքում:

ՀՀԶԾ իրականացումը

ՀՀԶԾ-ի իրականացման ընդհանուր պատասխանատուն համայնքի ղեկավարն է: Համայնքի ավագանու կողմից ՀՀԶԾ-ի ընդունումով հաստատվում են ՀՀԶԾ-ում ներառված բոլոր ոլորտային միջոցառումները՝ ըստ ժամկետների, ֆինանսավորման և կատարման պատասխանատուների: Այսինքն, ՀՀԶԾ-ի իրականացման կարևոր զործիքը հանդիսանում է բյուջետային կամ արտաբյուջետային ֆինանսավորմամբ ոլորտային միջոցառումը, որի իրականացման պատասխանատուն, որպես կանոն, համայնքի աշխատակազմի տվյալ ոլորտի ստորաբաժանման կամ համայնքի ենթակայության կազմակերպության ղեկավարը կամ համակարգողն է՝ համայնքի ղեկավարի անմիջական հսկողությամբ:

ՀՀԶԾ գնահատում

ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան կամ հնգամյա գնահատումը կատարում են համատեղ ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման զծով ԽՄ-ն և ԲԱԽ-երը՝ հիմնվելով ՀԶՀԾ-ի կիսամյակային մոնիթորինգների արդյունքների վրա: Համայնքի ղեկավարը կազմակերպում և անցկացնում է ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության աշխատանքային քննարկումներ, ՀԶՀԾ- ի իրականացման տարեկան հաշվետվության նախագծի հանրային բաց լսումներ և (կամ) քննարկումներ՝ հատուկ ուշադրություն դարձնելով ծրագրերի ու միջոցառումների իրականացման հարցերին: Հանրային քննարկումների արդյունքներով, ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման զծով ԽՄ-ն լրամշակում է ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության նախագիծը, պատրաստում է դրանց վերաբերյալ ավագանուն տրամադրվող տեղեկատվությունը (ամփոփաթերթը և տեղեկանքը) և ներկայացնում համայնքի ղեկավարին: Համայնքի ղեկավարը ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության լրամշակված նախագիծը և դրան կից փաստաթղթերը ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և որոշման

կայացմանը: ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության նախագծի կազմման, քննարկման և որոշման կայացման վերաբերյալ ընթացակարգերը նույնությամբ վերաբերում են նաև ՀԶՀԾ-ի իրականացման հնգամյա հաշվետվության նախագծի կազմմանը, քննարկմանը և որոշման կայացմանը: ՀԶՀԾ-ի վերահսկողությունն ապահովում է ՀԶՀԾ-ում ներառված ծրագրերի ամբողջական իրականացումը, ռեսուրսների արդյունավետ օգտագործումն առաջադրված խնդիրները կատարելու, ակնկալվող արդյունքները ձեռք բերելու և սահմանված նպատակներին հասնելու համար, ծրագրերի պաշտպանվածությունը սխալներից ու ձախողումներից, ժամանակին ու ճշգրիտ տեղեկատվության ստացումը ՏԻՄ-երի ավելի հիմնավորված որոշումների կայացման համար:

ՀԶՀԾ-ի վերահսկողությունը ենթադրում է՝ ՀԶՀԾ-ի մշակման, քննարկման և իրականացման ընթացակարգերի հստակ պահպանում, ոլորտային ծրագրերով առաջադրված խնդիրների կատարման արդյունքների ստուգում,ոլորտային ծրագրերի պահանջներից շեղումների պարզաբանում և պատճառների բացահայտում, ՀԶՀԾ-ի ծրագրերի իրականացումից ստացված արդյունքների ամփոփում և համադրում ծրագրերի նպատակների, միջոցառումների և նախատեսված արդյունքների հետ: ՀԶՀԾ-ի վերահսկողության արդյունքները ներկայացվում են համայնքի ավագանուն՝ ի գիտություն: Հիմնվելով ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշման վրա, ՀԶՀԾ-ի վերանայման անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարը ՀԶՀԾ- ում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ իր և/կամ համայնքի ավագանու անդամներից ստացված բոլոր առաջարկությունները կներկայացնի համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը: Համայնքի ավագանու անդամների առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք ավելացնում են ՀԶՀԾ-ի իրականացման ծախսերը, համայնքի ավագանու որոշումն ընդունվում է միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդով: ՀԶՀԾ-ի փոփոխությունները և (կամ) լրացումները, ավագանու հաստատումից հետո, հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Համայնքի զարգացման ծրագիրը հանդիսանում է Ապարան խոշորացված համայնքի առաջիկա հինգ տարիների զարգացման ուղեցույցը և տեսլականը: Զարգացման ծրագրի լիարժեք իրականացումը ապահովելու է համայնքի համաչափ զարգացումը, համայնքի բնակիչների կենսամակարդակի բարձրացումը, նյութական և մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարումը, զբոսաշրջության զարգացումը, ներդրումների ավելացումը և բնակիչների համար էլ ավելի բարեկեցիկ ու բնակության համար բարենպաստ համայնք դառնալը: Զարգացման ծրագրով նախատեսված ծրագրերի իրականացումը կապահովի համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավումը, կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է օգտագործել համայնքի ողջ ներուժը, ներգրավել արտաքին միջոցներ, համագործակցել պետական կառույցների հետ, դիմել տեղական և միջազգային կառույցների: Ելնելով համայնքի սոցիալ-տնտեսական վիճակից, զարգացման տեմպերից յուրաքանչյուր հաջորդ տարիների տարեկան բյուջեների հաստատման ժամանակ հնարավոր է որոշակի փոփոխություններ և շտկումներ, որը օրենքի ուժ կստանա համայնքի ավագանու համապատասխան որոշում ընդունելուց հետո: Համայնքի զարգացման ծրագրում փոփոխություններ կարող են կատարվել հիմք ընդունելով համայնքի բնակիչների, համայնքի ավագանու անդամներից ստացված առաջարկությունները, ինչպես նաև համայնքի ղեկավարի առաջարկությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2022 ԹՎԱԿԱՆ N 51-Ա

